ՅՈՒԼԻՍ 31/13 ՕԳՈՍՏՈՍ 1904

ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒ

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ուչ Բիլիսէի Ս. Յովհաննու վանք
8 Յուլիս 1904 թ.

Սիրելի արիւնակից եղբայրներ,

Հայ յեղափոխական Հնչակեան Կուսակցութեան Եղեսիոյ և Արարածի մասնաճիւղերի վարչութեանց նախաձեռնութեամբ անցեալ յունիս ամսի 26-ին ամենայն յաջողութեամբ երկիր անցաւ «Արծիւ» խումբը: Այդ խմբի առաջնորդն ու հրամանատարը — խմբապետը — մեր յեղ. պատմութեան մէջ քաջութեան ու անվեհերութեան անուն հանած Սասունցի Բարկէնն է: Ուրախ ենք ամենքս, վառուած, ոգևորուած, բռնկած ենք մեր տարաբաղդ Հայրենեաց անհուն սիրոյ, անշէջ սիրոյ վառ կրակով... Ուրախ ենք և աշխոյժ՝ հայրենասէրի ամենամաքուր զգացմունքներով լինուած, վասնզի մեր հրամանատարն է այնպիսի մի հեռատես, փորձուած, խոհուն ու քաջարի անձն, որը իւր ներկայութեամբ, առաջնորդութեամբ մեզ յիշել է տալիս — առաւել լաւ է ասեմ՝ մտքով փոխադրում է — հին-հին դարերը, տանում հասցնում է մեզ մինչև Թ. դարը, երբ Հայաստան աշխարհի աւերածութիւնների, հալածանքների, կոտորածների ժամանակ մեր պաշտելի Հայրենիքի Սասուն գաւառի բնակիչներից մէկը — Խութեցի Յովհանը — գլուխ անցած մի փոքրիկ բայց քաջարի խմբի՝ պաշտպանում էր իւր Հայրենիքն ու Ազգը անգութ Արաբներից, Պարսիկներից ու անխիղճ, անսիրտ Յոյներից...

Այժմ և մեզ, սիրելի ընկերներ, մէկ մենակ Սասունցի հրամանատարի հսկայ տեսքն, համակրելի և վերին աստիճանի սրտակաւելի խոհուն դէմքն, կաւեւ Սասունցիին միայն յատուկ բարք, վեհանձն բնաւորութիւնը, [illegible] վարմունքը, — այս ամենը մեզ յոյս ու հաւատ է ներշնչում: Մենք գնում ենք մեր սրբեան գնով Հայրենեաց... Դարը, բռնաբարուած մեր մարդկային — անհատական իրաւունքները պաշտպանելու... Այո՛, համոզուած ենք գնում, վասնզի սէ՞ր էր մեզ ներշնչում մեր խմբապետ Բարկէնը, պատմելով լրջութեամբ և վերին աստիճանի համեստութեամբ իւր կեանքից արկածներ, դէպքեր, խրատական ու յուսադրական գործեր... Պատմում էր իւր քաջագործութիւնների մասին, սակայն առանց գոյն տալու և չափազանցելու, պարզ իրողութիւններ, սոսկ եղելութիւններ՝ բոլորը անպաճոյճ կերպով ... որպէսզի մեր երկար ու ձիգ ճանապարհորդութիւնը տաղտկալի չլինի մեզ համար: Աստուա՞ծ իմ, այդ ի՞նչ վառ հաւատ ու հոգի է, որ ունի այդ լեռնականը. և ո՞վ կարէ նկարագրել Նրա հաւատը, հայրենասիրութիւնը, ընկերական անկեղծութիւնը: Խոստովանում եմ, ամենքս էլ զմայլուած ենք, սիրահարուած՝ մեր ազնիւ ընկերոջ վրայ... և ի՞նչ սէր. եթէ հրամայէր բոլորիս ջուրն ընկնել, խեղդուել, — պատրաստ էինք անյապաղ կատարելու Նրա հրամանը՝ հաւատացած լինելով, որ մեր մի մազըն անգամ չի թողնիլ ի զուր տեղը կորչելու... ա՞յնքան սիրում ենք Նրան. Նրա մաքուր, ազնիւ հոգուն մատաղ լինենք հա՛...

Մենք սրտատրոփ սպասում էինք թէ՝ ահա՛, ահա՛ կանցնենք սահմանը անվտանգ և անմիջապէս՝ հրամանատարի կարգադրութեամբ՝ մեր թօյլ ուժերով պաշտպան կը հանդիսանանք մեր Հայրենիքին հաւատարիմ մնացած մեր քոյրերին ու եղբայրներին... Նրա հրամանատարութեան տակ մենք ևս կ'ապացուցանենք հարիւրաւոր անգամներ ապացուցուած Հնչակեան փառաւոր ու Դրօշի յաղթանակն. կը պարզենք հայրենի հողի վրայ Ալ [illegible]եան Դրօշակը և արար-աշխարհին ցոյց կըտանք թէ Հնչակը նորից հընչեցրեց իւր Հայրենիքում իւր ահեղ փողը. — մա՛հ ոսոխին և վրիժառութի՛ւն մեր ապօրէն տէրերից...

Օ՜, ինչպիսի՜ ոգևորութիւն է նկատվում մեր մէջ, ինչպիսի՜ խորհրդաւոր րոպէներ, ժամեր անցուցինք մինչև սահմանը անցնելը. ինչե՞ր չէին գալիս շարան-շարան անցնում մեր հոգու աչաց առջևով... Մի տեղ գազանաբարոյ քիւրդերը անխնայ կոտորում են, բնաջինջ են անում մեր եղբայրներին ու քոյրերին. մոխիրէ կոյտեր են դարձնում երէկուայ շէն հայաբնակ գիւղերն. այրում, ոչնչացնում են տուն-տեղ. անմեղ երախաներին մորթոտում կամ ողջ-ողջ գցում բորբոքուած կրակի մէջ... բռնաբարում, լլկում մեծերին ու փոքրերին... Մի ուրիշ տեղ ոչխարի նման մորթում են մանկանը, կաշին մաշկում և միսը ուտացնում — վա՜յ ինձ — վշտահար ծնողներին... Ապա յղի մօր փորը դաշոյնով պատռում, պտուղը միջից հանում և շների առաջը գցում... Պատկերացնում էինք մեր աչքերին մեր տեսած ու լըսած զարհուրելի տեսարանները և՝ սոսկում, քստմնում, ամբողջ մարմնով դողում... պայթում, կատաղում դէպի Աստուծոյ այդ մարդ-գազան արարածները — Ղուրանի վայրենաբարոյ զաւակները...

Վերև ասացի ձեզ, սիրելի ընկերներ, թէ մենք յաջողութեամբ անցանք սահմանը: Ուրեմն այժմ գտնվում ենք մեր հայրենի հողի վրայ, Հայաստա՜ն աշխարհում... Ա՜խ, ո՞վ կարէ նկարագրել, եարա՜բ, դարերի ընթացքում օտարներից կրած քո (Հայրենիքի) բիւր-բիւր վէրքերը, քեզ պատճառած անթիւ ու անհամար ցաւերը, դարդերը... քո սրտի վրայ կուտակուած բիւրաւոր խոցերը... Սակայն ոչի՛նչ. ո՛վ պաշտելիդ իմ Հայրենիք, կուգանք մենք գործով արտայայտելու քեզ՝ իբրև գթոտ ու որդեսէր մօր՝ մեր որդիական անհուն սէրն ու համակրութիւնը. մենք ո՛չ մի բանով, աշխարհային ո՛չ մի մեծագին խոստումով շլանալով՝ քեզ չենք փոխարինի մի ուրիշով — խո՛րթ մայրով... Ուրեմն ընկնում ենք գիրկդ, ընդունի՛ր մեզ և պաշտպանի՛ր այնտեղ յափշտակիչ թշնամիներից, խորթ մայրերից ու հայրերից, որոնք կամենում են խլել մեզ քո գրկից և բարոյապէս ու ֆիզիքապէս մեռցնել մեզ...

Վառվում ու խորովում է զգայուն սրտի տէր, անկեղծ հայրենասէրի սիրտն ու հոգին, երբ ոտք է դնում հայրենի հողի վրայ: Եւ այն ժամանակ կատաղութեան, արդար զայրոյթի, վրէժխնդրութեան զգացմունքով լցվում է Նրա սիրտը. պահ մի խոնարհվում է, ընկճվում է այդ դա՞ռն մտածմունքների տակ, կուչ է գալիս, անմեղ ու անպաշտպան մանկան պէս յուսահատութեան արցունք է ցօղացնում իւր աչքերից, անիծում այս անգութ, գազան աշխարհը, ուր ազգերը, ցեղերը օր ու գիշեր ամեն ջանք ու ճիգ են թափում՝ լափել, կըլանել, իւրացնել, ձուլել իրենց հետ խե՞ղճ ու անտէր, յետ մնացած ազգերը... Քրիստոնեայ Եւրոպան մարդասիրաբար թոյլ է տալիս գազան Համիտ Սուլթանին պարբերաբար բնաջինջ անելու իւր հայրենի հողի վրայ ապրող մի բուռն խաղաղասէր, տիրասէր, հաւատարիմ, իւր հալալ աշխատանքով ապրող Հայ ազգը:

Ես — ինձ հետ նա՛ և գուցէ իմ ընկերները, — այդ մտքերի մէջ թաղուած էի, մտքերի ովկիանոսի մէջ էի ընկել և էլ չէի կարողանում դուրս գալ միջից: Ինչե՞ր էին անցնում մեր խմբապետի սրտով: Անշուշտ նա պատկերացնում էր իւր աչքերին ահռելի տեսարաններ, դէպքեր, անցքեր՝ իւր աչքերով իսկ հայրենի հողի վրայ տեսած... Չէ՞ որ 1894—1895 թթ. նա մինն էր այն քաջ հայ զինուորներից, որոնք կռւում էին Զէքի փաշայի անթիւ զօրաց և քիւրդ ցեղապետների, բաշիբոզուկների դէմ. սակայն ինչ-ինչ յարգելի պատճառներով նա անցաւ Ռուսիա ժամանակաւորապէս (մեր բոլոր գաղթականները այդ մտքով էին եկած Ռուսիա-Կովկաս, բայց աւա՜ղ, գազան Դալիցինի ծրագրով ընդ միշտ դատապարտուեցան այդ երկրում մնալու...) հիւրասիրութիւն ու պաշտպանու-

թիւն գտնելու այդ քրիստոնեայ երկրում... Իսկ այսօր զղջալով, յուսախաբուած՝ երջանիկ է զգում իրեն, որ բաղդը ժպտած իրեն՝ նորից դառնո՞ւմ է Հայրենիք... Հայրենեաց սէրը դէպի ինքն է քաշում նրան. և նա գնում է անհուն ուրախութեան, երջանկութեան ժպիտը երեսին... սլանում է իր «Արծիւ» խմբով դէպի իր սիրո՛ւն, աննմա՜ն Հայրենիքը՝ պաշտպանելու իր տանջըւող արիւնակիցներին։

«Ահա՛ և մենք, — արտասանեց Բարկէնը նայելով դէպի անհուն տարածութիւնը, — մենք և՛ս ձեզ հե՜տ ենք... գալիս ենք օգնութեան... արիացէ՛ք ուրեմն, սիրտ ու հոգի առէք, դուք մինակ չէք, ո՛վ եղբայրներս ու տանջուած, անարգուած, լլկուած ու անպատուած քոյրերս... Գալիս ենք դարձե՜ալ ձեզ հետ ապրելու, ձեզ հետ տանջուելու, ձեզ հետ՝ ի սէր մեր պաշտելի Հայրենեաց ու բազմաչարչար Ազգի՝ մեռնելու ու պառկելու մեր նախնիքների, պապերի, հայրերի ու մայրերի սուրբ հողակոյտերի, գերեզմանների քովը... Պաշտելի՜դ իմ Հայրենիք, ուխտե՜լ ենք օտար երկնակամարի տակ մինչև մեր արեան վերջին կաթիլը պաշտպանել քեզ և քո զաւակները ընդդէմ գազանների... Սիրո՜ւն երկիր, հոգիդ, անուշահամ, անմահական ջրերիդ, սար ու ձորիդ, կարկաչուն աղբիւրներիդ ու վտակներիդ ես զոհըւա՛ն... Մենք չենք զատուել մեր դրախտանման Հայրենիքից, կը գրկենք, ամուր կը գրկենք ու կը պաշտենք զքեզ... արեան գնով... Թէև այլևս դու չունիս պաշտպան հայ բանակներ, բայց դրանց փոխարէն դու մայրական սէր ներշնչեցիր քո բոլոր զաւակների սրտերում — և ահա՛ մենք նորի՜ց վերադառնում ենք քո ծոցը՝ պաշտպանելու մեր կեանքի գնով քեզ... «

Մենք ահագին ճամբայ էինք կտրել մինչև Մոզկա-սարը հասնելը։ Ոգևորուած էինք հայրենեաց սիրոյ բոցերով։ Թէև շատ յոգնած էինք և արժէր որ իջնէինք այդ տեղ մի փոքր հանգըստանալու, սակայն խմբապետի վերոյիշեալ սրտակտուր խօսքերն այնքա՜ն մեզ ոգևորեցին, որ մենք մի հրամանի, մի ակնարկի կը սպասէինք Բարկէնի կողմից՝ նետուելու պատերազմի դաշտը և ամեն հանդիպող թշնամու հետ մինչև վերջ կռուելու։

Յունիսի 28ն էր, առաւօտեան ժամը 7-ը։ Մի թեթև նախաճաշ արինք կանաչ խոտերի, հոտաւէտ, գոյնզգոյն ծաղիկների մէջ թաղուած։ Մեր նախաճաշին երգում էր նուագածուների մի ահագին խումբ, — այդ Հայաստան աշխարհի սիրո՜ւն, գոյնզգոյն թռչուններն էին, ըստ երևոյթին ուրախակից մեզ, որ Հայրենիք էինք վերադարձել օտարութիւնից։ Այո՛, նրանք այդ առաւօտը սովորականից աւելի ոգևորուած էին երգում վաղ առաւօտեանից, դեռ նոր արշալոյսը բացուած՝ նրանք — բնութեան այդ անմեղ արարածները — ստուստելով՝ գեղեցիկ, դաշտային հոտաւէտ խոտերի, ծաղիկների մէջ, իրենց դայլայլիկներով, իրենց անո՜ւշ, գողտրիկ մեղեդիներով, ճռլոզումներով վշտահաչար մարդու սիրտն ու հոգին են մխիթարում, սփոփում և կապում այդ երկրի հետ... Սէ՜ր են զարթեցնում դէպի բնութիւնը, վասն զի այդ անմեղ թռչնիկները գեղեցիկ բնութեան սիրահարներ են... Դու էլ ես ուզում խառնել քո խռպոտ, անգեղեկան, աններդաշնակ ձայնը, երգը նրանց ձայների, սքանչելի, գեղեցիկ մեղեդիների հետ... Նրանք զմայլած, սիրահարուած իրենց բնակավայրի հրաշալիքներով երգում են ազատ, համարձակ — այն ժամանակ դու էլ գրկում ես ա՛յն հողը, ուր ծնուել, մեծացել ես դու։ Ո՞վ չէ լսել ձեզանից Հայաստանի սոխակի զմայլեցուցիչ, մելամաղձոտ, կրակոտ երգը, ձայնը... Նրա երգերը բոլորովին տարբերվում են օտարերկրեայ սոխակների երգերից։ Մեր Երկրի սոխակը կասես մեզ հետ ողբում է երգի միջոցով Հայաստան աշխարհի փառաւոր անցեալը... Պատմում է դողդոջուն ձայներով ու ելևէջներով՝ մերթ զիլ, ոգևորուած, բարձր ձայնով և մերթ՝ մեղմ, յուսահատական ոճով ու ձայնով... Կասես նա պատմում է քեզ իր Հայրենիքում տեղի ունեցած և ներկայիս էլ տեղի ունեցող բոլոր անցքերը, տխուր և ուրախ օրերը Հայրենեաց... կասես որդիական սէ՜ր է քարոզում քեզ դէպի քո Հայրենիքը — Մայր-Հայաստան...

Ճիշտ այն պահուն, երբ մենք մի փոքր հանգիստ առած, կազդուրուած, նախաճաշիկ անելուց, ամեն բան կարգի բերելուց յետոյ՝ անհամբեր սպասում էինք խմբապետի բարեհաճ տնօրինութեանը — շարժուե՞լ, շարունակե՞լ մեր ճանապարհը թէ ո՛չ, յանկարծ նա — որ այդ պահուն մեզանից ո՛չ հեռու կանգնած՝ հեռադիտակով դիտում էր, ուսումնասիրում էր շրջակայքը — հրամայեց պատրաստ լինել, որովհետև թշնամին մօտենում է մեզ... Օրհասական դրութիւն ստեղծուեց մեզ համար... Մի քանի րոպէում մենք արդէն կազմ ու պատրաստ էինք ճշտութեամբ կատարելու Բարկէն խմբապետի բոլոր հրամանները։ Պահպանվում էր կատարեալ դիսցիպլինա (կարգապահութիւն)... Րոպէ առ րոպէ սպասում էինք անարգ ոսոխին. մէկ էլ նկատեցինք հեռուից մեզ մօտ շնորհ բերող հազարաւոր քիւրդեր, աշիրէթներ։

— Տղա՛ք, ձեզ տեսնեմ, գոչեց մեր քաջարի խմբապետը, մեր սրբազան Դրօշին չը դաւաճանենք, Նրա պատիւը, ինչպես անցեալում, այժմ և՛ս բարձր պահենք... Չը սարսափինք թըշնամու շատութիւնից... տեսած եմ, բարի ձեզի, այդպիսի մեծ քանակութեամբ զօրքեր, որոնք բնաջինջ կամ ցիր ու ցան եղած են Սասնոյ մի բուռն ժողովրդի, կուռ ոյժի առջև... Ուրեմն չը մոռնանք որ ոյժը քանակութեան մէջ չէ՛, այլ որակի. հեռո՜ւ, հեռո՜ւ ուրեմն մեզանից վախկոտութիւնն ու թուլամորթութիւնը... Արիանանք Հայրենեաց սիրով, սիրտ սրտի և ձեռք ձեռքի տուած, մի հոգի և մի սիրտ դառած՝ ընդ առաջ դուրս գանք թշնամուն, տեսնենք ի՛նչ է Նրա պահանջը, որ հատուցանենք նըրան ըստ արժանւոյն...

Կռւում էինք անդադար թըշնամու դէմ չորս կողմից։ Բարկէնի ներկայութիւնը, նրա քաջագործութիւնները դէպի հերոսական յաղթանակն էր տանում մեզ — և մենք հինգ-վեց ժամուայ ընթացքում գետին փռեցինք թշնամուց հարիւրի չափ քիւրդեր... Նկատեցինք որ թըշնամին արագ-արագ յետ է նահանջում, թողնելով պատերազմի վայրում բաւական զէնքեր հանդերձ կոտորուածներով։ Իսկ մեր կողմից՝ անմատչելի դիրքի շընորհիւ՝ այդ օրըշեայ մի կորուստ չունեցանք։ Վրայ հասաւ գիշերը, մի մութ գիշեր, որ մեզ պիտի նպաստէր սպանուած քիւրդերի զէնքերից մեծ մասը վերցնելու և հեռանալու դէպի Նպատ սարը։ Արշալոյսը դեռ նոր էր բացուել՝ առաւօտեայ զով ու առողջարար օդը օրօրվում էր մեղմ կերպով. խոտերի ու երփներանգ ծաղիկների վրայ նստել էր ցօղը... Սքանչելի՜ տեսարան, գեղեցի՜կ բնութիւն. զմայլելի՜ առաւօտ... Սակայն մենք ազատ չէինք մեր բնակավայրում վայելելու բնութեան բարիքը, այլ սրբազան պարտականութիւններ ունէինք կատարելու մի շարք. ուստի անմիջապէս պատրաստուեցանք և յանկարծա՛կի յարձակում գործեցինք կէս վերստ հեռաւորութեան վրայ գտնուած թրքական զօրանոցի և մթերանոցի վրայ. Կռուի միջոցին զինուորներից սպանուեցան 60 հոգի, որից յետոյ մթերանոցի զէնքերը գրաւելով՝ տեղական հայ երիտասարդներին զինեցինք և ստուարացրինք մեր խումբը։ Խլեցինք 7 հատ օսմանեան թնդանօթներ և ոչնչացրինք տեղն ու տեղը, վասն զի հնարաւորութիւն չկար մեզ հետ սարը բարձրացնելու. իսկ մենք պէտք է շուտով մի ապահով տեղ ընտրէինք՝ պաշտպանուելու համար։ Մենք բարձրացանք նորից Նպատ սարը և դիրքեր գրաւեցինք։

Յունիսի 29-ին, առաւօտեան, թշնամին մեզ նորից պաշարեց։ Կրկին սկսուեց ահեղ պատերազմը։ Եւ ահա՛ այդ կռուի մէջ մերայինք գործեցին այնպիսի քաջագործութիւններ, որոնց նմանը տակաւին չէր ունեցած մեր յեղափոխական պատմութիւնը մինչև այդ օրը։ Անվերջ կռւում էր կորիւն Բարկէնը և իր օրինակով խրախուսում իր ընկերներին։ Թշնամին զարհուրեց, սարսափեց, երբ տարափի նման տեղում էին նրանց գլխին շիկացած բազմաթիւ գնդակներ ու ռումբեր, որոնք պայթելով հարիւրաւոր մարդիկ էին փռում սարի լանջերին ու տափարակ տեղում... Մեր դրօշակը՝ Բարկէնը ամրացնելով ս. Յովհաննու աւերակ վանքի գլխին՝ թշնամին մոլորեցնելու ու շփոթեցնելու համար՝ իր քաջ խումբը տարաւ դէպի Սև-սարը... Այդ ահեղ պատերազմի մէջ մեր խմբից կորցրինք ընդամենը չորս հոգի...

Մեր վերոյիշեալ Արծիւ խումբը, որ այժմ բաղկացած է 90 հոգուց, Սև լերան վրայ կանոնաւոր թիւրք և քիւրդ աշիրէթների բազմաթիւ զօրաց հետ կըռուելով այդ սարի տակ և լանջերին գետին փռեց աւելի քան 1000 հոգի, ուր սպանուեցան և մեր ձեռքով մի քանի անուանի արիւնարբու քիւրդ շէյխեր ու ցեղապետներ։ Մեր խումբը անվնաս է և այժմ ունի բաւականաչափ ուտելու պաշար և ռազմամթերք ու անհամբեր սպասում է ուրիշ խմբերի օգնութեան, որպէսզի յաջողութեամբ առաջ խաղայ։

Յուլիսի 5. — Արծիւ խմբի փառաւոր յաղթութիւնից յետոյ, այսինքն երեք մեծ ընդհարումների ժամանակ, որոնք տեղի ունեցան Մոզկա լերան, Նպատ լերան և Սև սարի շուրջը, վայրենաբարոյ թիւրքերն ու քիւրդերը յարձակուեցան Իւչ-Քիլիսէի (Ալաշկերտի գաւառում) շրջակայքում գտնուած 5 հայաբնակ Գիւղերի վրայ և մեծից սկսած մինչև օրօրոցի անմեղ մանուկը սրի անցուցին... այրեցին, մոխիրէ կոյտեր դարձրին գիւղերն...

Անհամբեր սպասվում է պետութեանց Մուշում գտնուող հիւպատոսների գալուն։ Մանրամասնութիւնները կը հաղորդեմ միւս նամակովս։

Առ այժմ ասեմ ձեզ ցտեսութի՜ւն և շտապեմ մի կերպ նամակս ձեզ յղելու։

Ձեր օգնութեանն ու խրախուսանքին կը սպասենք անհամբեր։

Ձեր արիւնակից եղբայր՝
Հմայեակ Դիմաքսեան

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.